Հավելված 7
«ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/12» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/12

ք. Արարատ «14» ապրիլի 2026թ.

«Արարատի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ասլան Ավետիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ալեքս Լեո» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Հ. Ջոհրարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՙԱրարատ համայնքի Արարատ քաղաքի ՌԳՖ 9 շենքի բակի բարեկարգում՚** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/12 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.08.2026թ:
աշխատանքների կատարման վերջնաժամկետ

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա)Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ)Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ)Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ)Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել ...5.... օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1Աշխատանքների առնվազն --20--- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի ( էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:
3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:
3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:
3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ------365---- օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[1]
3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:
Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __3___ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:
4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **8.844.000 (ութ միլիոն ութ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ, որից 1.474.000 (մեկ միլիոն չորս հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամը**՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[2]

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ–նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

---

[2] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

6.1Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները[3].

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
| --- | --- | --- |
| 1 | Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 2 | Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 3 | Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 4 | Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն): | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 5 | Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 6 | Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 7 | Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |

1. Սույն աղյուսակում նշված պատասխանատվության միջոցները Կապալառուի նկատմամբ կարող են կիրառվել արձանագրված խախտման վերացման համար պայմանագրով նախատեսված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնողի կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային

---

[3] *Եթե գնման առարկան չի հանդիսանում շինարարական ծրագիր 6.5.1 կետը հանվում է պայմանագրի նախագծից, իսկ 1.2 կետից հանվում են «և հաստատված նախագծանախահաշվային » բառերը և 6.4 կետից հանվում է 6.5.1 կետին կատարված հղումը:*

անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում՝ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից Պատվիրատուին ներկայացված գրավոր հավաստման հիման վրա:

6.6Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[4]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

---

[4] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմպնագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:[5]

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի համայնքապետարան

ք. Արարատ, Շահումյան 34

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900422101437

ՀՎՀՀ 04240194

Համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան

-----------------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱԼԵՔՍ ԼԵՈ» ՍՊԸ

Հ,Հ Արարատի մարզ, համայնք Նորաշեն,

Իսակովի փ. տուն 20, 0731.

ՀՎՀՀ 04253032.

<<Ակբա բանկ ԲԲԸ>>

Հ/Հ 220013337500000

Համբարձում Զոհրաբյան

-----------------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

---

[5] *Եթե Պատվիրատուն հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝ «վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական տալու» բառերով:*

Հավելված թիվ 1
« 14 » ապրիլի 2026 թ. կնքված
ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/12 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
## «Արարատ համայնքի Արարատ քաղաքի ՈՎՖ 9 շենքի բակի բարեկարգման» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը /հազ դրամ/ | Ընդամենը /հազ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **Ասվալտբետոնե սալվածք** | | | | |
| 1 | Բնահողի և խճային հիմնատակի քանդում ձեռքով միջինը 20սմ /դուս տեղափոխելու համար/ | մ3 | 64,02 | 2,76 | 176,64 |
| 2 | Քանդված բնահողի և խճի բարձում | տն | 96,04 | 0,50 | 48,17 |
| 3 | Տեղափոխում 3 կմ | տն | 96,04 | 1,01 | 97,28 |
| 4 | Գրունտի մշակում ձեռքով եզրաքարերի հիմքերի համար /0,30*0,40/ | մ3 | 27,24 | 2,76 | 75,15 |
| 5 | Բետոնե հիմքերի կառուցում B - 7.5 դասի բետոնից /0,30*0,40/ | մ3 | 27,24 | 31,04 | 845,46 |
| 6 | Բետոնե եզրաշերտի կառուցում B - 12.5 դասի բետոնից 0.15*0.20* | մ3 | 6,81 | 45,68 | 311,03 |
| 7 | Տեղանքի դիրքի նախնական հարթեցում | մ2 | 320,12 | 0,17 | 54,15 |
| 8 | Ավազակոպիճից հիմնահատակի իրականացում 10սմ հաստությամբ | մ3 | 32,01 | 7,53 | 240,91 |
| 9 | Խճային հիմնահատակի իրականացում 5սմ հաստությամբ | մ3 | 16,01 | 6,72 | 107,56 |
| 10 | Մանրահատիկ ասվալտբետոնե ծածկույթի իրականացում 3 սմ հաստությամբ ,Բ տիպի (վերին շերտ) | 100մ2 | 3,20 | 245,15 | 784,77 |
| | **ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ՃԱՆԱՊԱՐՀ** | | | | |
| 1 | Ասվալտբետոնե ծածկույթի քանդում 5սմ | 100մ3 | 0,08 | 447,83 | 37,46 |
| 2 | Քանդված ասֆալտբետոնի բարձում | տոն | 11,29 | 0,50 | 5,66 |
| 3 | Տեղափոխում 3 կմ | տն | 11,29 | 1,01 | 11,44 |
| 4 | Գրունտի մշակում ձեռքով եզրաքարերի հիմքերի համար /0,30*0,40/ | մ3 | 5,84 | 2,76 | 16,11 |
| 5 | Բետոնե հիմքերի կառուցում B - 7.5 դասի բետոնից /0,30*0,40/ | մ3 | 5,84 | 31,04 | 181,20 |
| 6 | Բազալտե հավաքովի եզրաքարերի տեղադրում 300x150մմ | 100գմ | 0,49 | 969,04 | 471,44 |
| 7 | **Խճային հիմնահատակի իրականացում 12սմ հաստությամբ** | մ3 | 20,07 | 7,10 | 142,58 |
| 8 | Մանրահատիկ ասվալտբետոնե ծածկույթի իրականացում 4,5 սմ հաստությամբ Ա տիպի (վերին շերտ) | 100մ2 | 1,67 | 367,15 | 614,17 |
| | **Անցումներ և սալվածք** | | | | |
| 1 | Տեղանքի դիրքի նախնական հարթեցում | 100մ2 | 1,06 | 6,34 | 6,73 |
| 2 | Գրունտի մշակում ձեռքով եզրաքարերի հիմքերի համար | մ3 | 5,10 | 2,76 | 14,07 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Բետոնե հիմքերի կառուցում B - 7.5 դասի բետոնից /0,2*0,2/ | մ3 | 5,10 | 31,04 | 158,32 |
| 4 | Բետոնե հիմքերի և եզրաշերտի կառուցում B - 12.5 դասի բետոնից /100*200/ | մ3 | 5,10 | 36,56 | 186,47 |
| 5 | Բետոնե հավաքովի եզրաքարերի /500*200*80մմ/ տեղադրում | գ/մ | 127,52 | 2,48 | 315,97 |
| 6 | Ավազակոպիճից հիմնահատակի իրականացում 15սմ հաստությամբ | մ3 | 15,93 | 7,53 | 119,91 |
| 7 | Բազալտե ավազաշերտի կառուցում 50 մմ | մ3 | 5,31 | 10,94 | 58,09 |
| 8 | Սալահատակի պատրաստում բետանյա երկրորդ շերտը մոխրագույն, 6սմ// կարանների լցումով ցեմ. Շաղախով | մ2 | 106,22 | 6,01 | 638,50 |
| | **Մետաղական ցանկապատ** | | | | |
| 1 | Գրունտի մշակում ձեռքով հիմքերի համար /սյուների տակ/ | 100մ3 | 0,01 | 275,89 | 3,28 |
| 2 | Կետային հիմքերի կառուցում B-7.5 դասի բետոնից /սյուների տակ/ | մ3 | 1,19 | 31,04 | 36,87 |
| 3 | Մետաղ ցականանկապատի պատրաստում և տեղադրում | տն | 0,53 | 193,62 | 102,55 |
| 4 | Մետ խող D=57x2,5մմ /սյուներ/ | գծմ | 33,00 | 1,72 | 56,88 |
| 5 | Մետ խող Dy=40x2,5մմ /գոտիներ/ | գծմ | 155,10 | 0,68 | 106,23 |
| 6 | Մետ խող Dy=25x2,5մմ /ճաղեր/ | գծմ | 46,53 | 0,52 | 24,22 |
| 7 | Մետաղական Էլեմենտների յուղաներկում երկու անգամ железный сурик. | քմ | 29,04 | 1,29 | 37,56 |
| | **Բարեկարգում և կանաչապատում** | | | | |
| 1 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով միջինը 20սմ /դուս տեղափոխլու համար/ | մ3 | 64,00 | 2,76 | 176,57 |
| 2 | 3-րդ կարգի բնահողի մշակում 0.25մ3 տարողությամբ էքսկավատորով միջինը 20սմ / դուս տեղափոխլու համար/ | 100մ3 | 1,32 | 84,70 | 111,61 |
| 3 | Բնահողի բարձում ա/ինք. վրա և ներկրում. 3կմ-ից 20սմ | մ3 | 195,78 | 1,51 | 296,52 |
| 4 | Հողե նախապատրաստական շերտի լիցք տարածքով և փռում 20սմ | մ3 | 195,78 | 1,15 | 225,87 |
| 5 | Կանաչապատման տարածքի ցանում խոտի սերմով | 100մ2 | 9,79 | 15,22 | 148,97 |
| | **Էլ լուսավորություն** | | | | |
| 1 | Փոսորակի փորում ձեռքով III կարգի գրունտներում | մ3 | 1,28 | 5,14 | 6,58 |
| 2 | Բետոնե հիմք կանգնակների տակ B 7.5դասի բետոնից | մ3 | 1,28 | 31,84 | 40,75 |
| 3 | Մետաղական հենասյուների մոնտաժում Φ108*2,5մմ, L=7,50մ | հատ | 8,00 | 22,87 | 182,95 |
| 4 | Φ32*2.5մմ L=1,70մ մետաղական պահունակների տեղադրում հենասյուների վրա | հատ | 8,00 | 67,03 | 536,27 |
| 5 | Արևային փողոցային լույսեր Արտաքին բարձր լույս 120W All In One Solar Street Light - | կ-տ | 8,00 | 20,18 | 161,43 |
| 6 | Մետաղական հենասյուների յուղաներկում 2 անգամ սուրիկով | 100 մ2 | 0,18 | 53,07 | 9,36 |
| 7 | Մետաղական պահունակների յուղաներկում 2 անգամ | 100 մ2 | 0,01 | 53,07 | 0,73 |
| | **Աստիճան** | | | | |
| 1 | Բետոնե աստիճանների քանդում | մ3 | 2,73 | 48,78 | 133,17 |
| 2 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | մ3 | 2,28 | 2,76 | 6,29 |
| 3 | Ժապավենային հիմքերի կառուցում B-7.5 դասի բետոնից | մ3 | 2,28 | 31,04 | 70,77 |
| 4 | Աստիճանների կողքերի բետոնե պատերի կառուցում B-12,5 բետոնից | մ3 | 2,14 | 43,79 | 93,60 |
| 5 | Խճի նախաշերտի կառուց.15 սմ | մ3 | 2,73 | 12,18 | 33,26 |
| 6 | Բետոնե հարթակի և աստիճանների կառուցում B-12,5 բետոնից | մ3 | 2,73 | 43,79 | 119,54 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 8441,08 |
| 13.3 % վերադիր ծախսեր | 1122,66 |
| Ընդամենը | 9563,74 |
| 11 % շահույթ | 1052,01 |
| Ընդամենը | 10615,76 |
| 1.5 % Չնախատեսված աշխատանքներ | 159,24 |
| Ընդամենը | 10774,99 |
| 20 % ԱԱՀ | 2155,00 |
| Ընդամենը | 12929,99 |

Կապալառուն աշխատանքները կատարում է **Արարատ քաղաքի ՌԿՖ բանավանում:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Արարատի համայնքապետարան | «ԱԼԵՔՍ ԼԵՈ» ՍՊԸ |
| ք. Արարատ, Շահումյան 34 | ՀՀ Արարատի մարզ, համայնք Նորաշեն, |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Իսակովի փ. տուն 20, 0731. |
| ՀՀ 900422101437 | ՀՎՀՀ 04253032. |
| ՀՎՀՀ 04240194 | <<Ակբա բանկ ԲԲԸ>> |
| Համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան | Հ/Հ 220013337500000 |
| | Համբարձում Զոհրաբյան |
| _________________________ | _________________________ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված թիվ 2*
*« 14 » ապրիլի 2026 թ. կնքված*
*ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/12 ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*
**«Արարատ համայնքի Արարատ քաղաքի ՈԿՖ 9 շենքի բակի բարեկարգման »**
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | **Արարատ համայնքի Արարատ քաղաքի ՈԿՖ 9 շենքի բակի բարեկարգման աշխատանքներ** | Պայմանագրի կնքման օրից | 30.08.2026թ |
| 2 | | | |
| 3 | | | |
| 4 | | | |
| 5 | | | |
| ... | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Արարատի համայնքապետարան
ք. Արարատ, Շահումյան 34
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900422101437
ՀՎՀՀ 04240194
Համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԼԵՔՍ ԼԵՈ» ՍՊԸ
Հ,Հ Արարատի մարզ, համայնք Նորաշեն,
Իսակովի փ. տուն 20, 0731.
ՀՎՀՀ 04253032.
<<Ակբա բանկ ԲԲԸ>>
Հ/Հ 220013337500000
Համբարձում Զոհրաբյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

** Աշխատանքների կատարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է աշխատանքը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պայմանը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների գնման դեպքում:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, իսկ «Ավարտը» սյունակում կատարման ժամկետը սահմանվում է օրացուցային օրերով:*

*Հավելված N 3*
*«14» ապրիլի 2026 թ. կնքված*
*ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/12 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231270 | Արարատ համայնքի Արարատ քաղաքի ՌԿՖ 9 շենքի բակի բարեկարգման աշխատանքներ | ... % | ... % | ... % | | 1768800 | 3537600 | 5306400 | 7075200 | 3844000 | | | | **8844000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Արարատի համայնքապետարան | «ԱԼԵՔՍ ԼԵՌ» ՍՊԸ |
| ք. Արարատ, Շահումյան 34 | Հ,Հ Արարատի մարզ, համայնք Նորաշեն, |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Իսակովի փ. տուն 20, 0731. |
| ՀՀ 900422101437 | ՀՎՀՀ 04253032. |
| ՀՎՀՀ 04240194 | <<Ակբա բանկ ԲԲԸ>> |
| Համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան | Հ/Հ 220013337500000 |
| | Համբարձում Զոհրաբյան |
| ______________________ | ______________________ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված թիվ 4*
*«      » ապրիլի 2026 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ________ | գտնվելու վայրը ________ |
| հհ ______________ | հհ______________ |
| հվհհ ______________ | հվհհ______________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    »«          » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «          » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետ /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*«        »                    20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը                                                     Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20    թ. ____________________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                                    պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց** hայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |

*Հավելված N 5*
*«     »          20  թ. կնքված*
*ծանկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ______________________ -ի և ______________________ -ի միջև «--»      20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը          կապալառուի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և ______________ -ի   միջև  «--»  20  թ-ին կնքվել է «-------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,
կապալառուի անվանումը

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

______________________________          ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»     20  թ.

Հավելված 1.1
«ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/12» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՀԱՎԱՍՏՈՒՄ

**հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին**

<<ԱԼԵՔՍ ԼԵՈ>> ՍՊԸ -ն հավաստում է, որ «**ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/12**» ծածկագրով **գնանշման հարցման** շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, պարտավորվում է նույն ծածկագրով մրցույթի շրջանակում կնքվող պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

Digitally signed by ZOHRABYAN HAMBARDZUM 2603860504
Date: 2026.03.19 16:36:50 AMT

<<ԱԼԵՔՍ ԼԵՈ>> ՍՊԸ -ի,տնօրեն՝ Հ.Զոհրաբյան
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

________________
ստորագրություն

Կ. Տ.